

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N 1024-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ 2023 թվականի N ____ -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N 1024-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի
Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի
հուլիսի 14-ի ««Ժամանակավոր անաշխատունակության և մայրության
նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
կիրարկումն ապահովելու մասին» N 1024-Ն որոշման (այսուհետ՝
որոշում)՝
- N 2 հավելվածի 23.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«23.1. Եթե հաշվարկային ժամանակահատվածը ներառում է նաև վարձու
աշխատողի՝ միկրոձեռնարկատիրության մեջ ներգրավված լինելուն՝ մինչև 2023
թվականի հուլիսի 1-ն ընկած ամիսներ, ապա այդ ամիսներից յուրաքանչյուրի
համար, որպես եկամուտ, հաշվառվում է ժամանակավոր
անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ սահմանված՝
«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքի 1-ին հոդվածով
սահմանված չափի և նվազագույն ամսական աշխատավարձի նկատմամբ
հաշվարկված եկամտային հարկի հանրագումարի (այսուհետ՝ նվազագույն
ամսական աշխատավարձ) հիսուն տոկոսը:».

- N 5 հավելվածում՝

ա. 11-րդ կետում «1-5-րդ օրացուցային օրը՝ ներառյալ օրացուցային օրվա
համար» բառերը փոխարինել «1-5-րդ օրացուցային օրը ներառյալ՝» բառերով.

բ. 30-րդ կետի 5-րդ ենթակետը լրացնել հետևյալ նախադասությամբ.

«Այս դեպքում երեխայի խնամքն իրականացնող վարձու աշխատողին
անաշխատունակության թերթիկը տրամադրում է երեխային առաջնային
պահպանման ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունը՝ հիմք

ընդունելով սույն ենթակետում նշված՝ երեխայի մոր (խնամակալի, հոգաբարձուի) առողջական վիճակի մասին բժշկական փաստաթուղթը կամ երեխայի մոր՝ ընտանիքի մյուս հիվանդ անդամի հետ հիվանդանոցային բժշկական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու վերաբերյալ բժշկական փաստաթուղթը:».

գ. 34-րդ կետը լրացնել հետևյալ նոր պարբերություններով.

«Փոխնակ (սուրոգատ) մորից ծնված երեխայի կենսաբանական մորն անաշխատունակության թերթիկը տրամադրում է սույն կարգի 33-րդ կետում նշված այն բժշկական կազմակերպությունը, որտեղ իրականացվել է փոխնակ մոր հղիության հսկողությունը (այն բժշկական կազմակերպությունը ով պահանջն առաջանալու դեպքում անաշխատունակության թերթիկ է տրամադրելու փոխնակ մորը):

Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված վարձու աշխատողին, ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձին անաշխատունակության թերթիկ տրամադրում է նորածնին առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունը:»:

- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: